

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐԸՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆԸ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ
ՕՐԵՆՍԱԳՐԸՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «կամ Օրենսգրքով սահմանված վճարի» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող շահութաբերության համար» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«1. Ռոյալթիի բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքում (այսուհետ՝ սույն բաժնում խտանյութի հետ միասին՝ արտադրանք) առկա վճարվող յուրաքանչյուր մետացի իրացման շրջանառությունը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 209-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 209. Ռոյալթիի դրույքաչափը:

1. Ռոյալթիի համար սահմանվում է ռոյալթիի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերը.

Մետաղի տեսակը	Միջազգային գինը (ԱՄՆ դոլար)	Դրույքաչափ
		%
Պղինձ*	Մինչև 5500	4
	5501-ից 6500-ը	6
	6501-ից 7500-ը	13
	7501-ից 8500-ը	19
	8501-ից 9500-ը	24
	9501 -ից 10500-ը	28
	10501 -ից 15000-ը	39
	15001 և ավելի	45
Մոլիբդեն*	Մինչև 10000	4
	10001-ից 16000-ը	6
	16001-ից 20000-ը	17
	20001-ից 25000-ը	26
	25001-ից 30000-ը	33
	30001-ից 40000-ը	41
	40001-ից 50000-ը	45
	50001 և ավելի	48
Ոսկի**	Մինչև 1200	4
	1201-ից 1400-ը	6
	1401-ից 1700-ը	15
	1701-ից 2000-ը	22
	2001-ից 2300-ը	27
	2301-ից 2600 -ը	31
	2601 և ավելի	35

*- միջազգային գինը ներկայացված է մեկ տոննայի համար

** - միջազգային գինը ներկայացված է մեկ տրոյական ունցիայի համար

2. Բացի սույն հոդվածի առաջին մասով սահմանված մետաղներից այլ մետաղների ռոյալթիի հաշվարկման համար սահմանվում է ռոյալթիի բազայի նկատմամբ 6 տոկոս դրույքաչափ:
3. Ռոյալթիի դրույքաչափի հաշվարկի համար մետաղի միջազգային գին համարվում է հաշվետու եռամսյակի միջին գինը: Յուրաքանչյուր եռամսյակի համար մետաղի միջազգային գինը հրապարակվում է ֆինանսների բնագավառում լիազոր պետական մարմնի կողմից կառավարության սահմանած կարգով:

Հոդված 5. Օրենսգրքի 211-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «Բնօգտագործման վճարի» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ ռոյալթիի» բառերը.
2. 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասում «Ռոյալթի վճարողները մինչև հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ» բառերը փոխարինել «Ռոյալթի վճարողները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 222-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում «մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ» բառերը փոխարինել «մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ» բառերով.
2. 3-5-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասում «Բնօգտագործման վճարի» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ ռոյալթիի» բառերը և «, այդ թվում՝ սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթիի գումարի և հարկային տարվա ընթացքում վճարված ռոյալթիի կանխավճարների հանրագումարի բացասական տարբերությունը» բառերը հանել:

Հոդված 9. Ուժի մեջ մտնելը և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:
2. Ռոյալթի վճարողները մինչև 2022 թվականի ապրիլի 20-ը ներառյալ՝

1) Օրենսգրքի 52-54-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմում և հարկային մարմին են ներկայացնում 2021 թվականի ռոյալթիի հարկային հաշվարկը.

2) պետական բյուջե են վճարում Օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով 2021 թվականի համար հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթիի գումարները: